


6388

Yngu

Արմեն Հովհաննեսի Աղջկյան



1803
2008

Ա Պ Յ Ս

ՄԱՆԻԱ ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔԵԱՆ

(ՆՐԱ ՄԱՀԱԿԱՆ ԵՐԵՔ ԱՄՆԱԿԻ ԱԹԻԹՈՒ)

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Կազմեց Ա. Լ.



Թ. Բ. Շ. Խ. Ա
Տպարան ՀԿՕՒԱ Մուղեսկի փող., Ա 8
1918

ՏԻՍՏ ՅԱՄ ԵԾ

ՀՀ

271
4-69

ամ.

Կ Պ Յ Ս

ՄԱՆԻԱ ԼՈՒԺԻ-ՄԵԼԻՔԵԱՆ

(ՆՐԱ ՄԱՀՈՒԹԵՆ ԵՐԵՔ ԲՄԵԱԿԻ ԸՆԻԹՈՎ)

1005
ՀՀ ՀՀ ՀՀ
ՀՀ ՀՀ ՀՀ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Կողմանց Ա



Թ Ի Ժ Լ Խ Ս

Տպարան «ՀՊՕԽԱ» Մուզեյսկի փող., № 8:
1914

բան չ եւ ողմանաբ սիրածի ցյանի այս վաճառմանը
ցուց զնի

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Արժանապատիւ հայր Խուցեան Խորէն քահանան
մի գեղեցիկ և շատ նպատակայարմար միտք է յղաց-
ըել. տպելով «Թիֆլիսի ս. Ստեփաննոս կուսանաց-
անապատի պատմութիւն» գրքոյկը, որը կազմելիս,
ինչպէս ինըը տէր-հայրն է ասում, օգտել է յիշեալ
անապատի աղքատիկ արխիւլց:

Ասում ենք, գեղեցիկ ձեռարկութիւն է այդ և
հետաքրքրութեան արժանի շատերի համար. Հեթանո-
սական դարերից սկսած անսալատական կեանքը շա-
տերին է հետաքրքրել և շատերն են եղել, որոնք զբաղ-
ւել են նրանց ուսումնասիրութիւններով՝ ծանօթաց-
նելով ժողովրդին նրանց ներքին կեանքի հետ.

Բոլոր երկրների մենաստաններում ամեն դարում
իւրաքանչիւր անապատական -կոյս թէ արեղայ—բա-
ցի երկնային սուրբ գործին նւիրուելուց, ունեցել նն և
մի այլ հոգեկան մխիթարութիւն՝ երկրայինը: Նրանք
անձնատուր լինելով սուրբ զբքին և աղօթքներին, չեն
մոռացել նաև իրականութիւնը և այդ իրականութեան
մէջ տառապող իրանց շրջապատճերին, որոնց համար
օգտակար են եղել այնքան, որքան թոյլ են տւել այդ
անապատականներին իրանց նիւթական ու բարոյա-
կան ոյժերը:

Մեր խօսքը, ի հարկէ, բառի իսկական մտքով ա-
նապատականների մասին է:

Ահա թէ ինչու համար ենք ասում, որ գեղեցիկ բան է մի այդպիսի զործին ձեռնամուխ լինել, որով ծանօթացնում է հասարակութեան, որ աշխարհային կեանքից հեռացած և երկնայինին նույրած զատ անպատականներ բացի երկնային սրբութիւնից, ունեցել են և երկրագին սրբութիւն, այն է օգնել թշւարին և

թեթևացնել նրա վիշտը, ինչպէս պատւիրում է մեզ
մեր Տէրը:

Սակայն ցաւօք սրտի պէտք է ասենք, որ արժա-
նապատիւ հայր Խորէն Խուցեանի կազմած գրքոյկը,
«Թիֆլիսի ո Ստեփաննոս կուսանաց անապատի պատ-
մութիւն»-ը լաւ լինելով հանդերձ, ունի մի դգալի պա-
կառութիւն, որի բացատրութիւնով չենք կամենում
զբաղուել:

Տէր հայրը մի առ մի թւելով յիշեալ անապատի
մայրապետների և կոյսերի բարեմասնութիւններն ու
նրանց կատարած բարեգործութիւնները, աչքաթող է
արել այնպիսի մի պատկառելի կոյսի անոն, որպիսին
Մանիա Լոռիս-Մելիքեանն էր, որի կատարած բարե-
գործութիւնները գերազանցում են նոյն իսկ տէր հօր
յիշատակած շատ կոյսերի բարեմասնութիւններից:

Մենք չենք կամենում յանդիմանել հայր Խու-
ցեանին այդ թերութեան համար և ոչ էլ քննութեան
մէջ մտնել նրա պատճառներն իմանալու, այլ մեր
սրբազն պարտքն ենք համարում երևան հանել վերև
յիշւած հանգուցեալ սարկաւագուհի Մանիա Լոռիս-Մե-
լիքեանի անունը, որի արած բարիքները ընթերցողը
կը տեսնի գըքոյկիս յետագայ երեմներում, որը ձեռք
եմ բերել փաստալի աղբիւրներից:

Ա. Լ.



Կոյս Մանիա Լոռիս-Մելիքեան
(Նստած Որնակ դիւղում իր կառուցած աղբիւրի մօմ)

Կ Ս Յ

ՄԱՆԻԱԼՈՒԻՍ - ՄԵԼԻՔԵԱՆ

Աւելորդ եմ համարում այստեղ կանգ առնել
և երկար ու բարակ բացատրել, թէ Երբ է առաջ
եկել ճգնաւորական կեանքը, Երբ են հիմնել կու-
սանոցներն ու վանքերը, և այն, թէ որ թւից
գոյութիւն ունի Թիֆլիսի ս. Ստեփաննոս կու-
սանաց անապատը, կամ պատմել նրա անցեալը,
նրա պատմութիւնը, որովհետև աւելի տեղեակ
անձինք իրանց վրայ դրած այդ պարտականու-
թիւնն արդէն կատարել են, ուստի ես դիմում
եմ ուղղակի նպատակիս:

Կոյս Մանիա Լոռիս-Մելիքեանը հայազգի
յայտնի կոմս Միքայէլ Լոռիս-Մելիքեանի ազգա-
տոհմից է: Ծնւել է Թիֆլիսում 1836 թւին:

Տասներկու տարեկան հասակից նա մտնում
է Թիֆլիսի կուսանաց անապատը, ուր և գըտ-
նում է իր ցանկացած կեանքը, հեռու մնալով
աշխարհիկ վայելքներից և մարդկային քաօս կեան-
քից: 1861 թւին ձեռնադրում է Անապատի
միաբան:

Այնուհետև կոյս Մանիան կանգնած իր կոչ-
ման բարձրութեան վրայ՝ իսկապէս որ մայր է

դառնում իր շրջապատի և իր անձնական համեստ նիւթական կարողութիւնից բաժին է հանում զանազան բարեգործութիւններ անելով։

1896 թւին, շնորհիւ իր մատուցած աչքի ընկնող ծառայութիւնների, երջանկայիշատակ Խրիմեան կաթողիկոսից կոնդակով պարգևատրըւում է լանջախաչով, որով աւելի ոգևորւում է հանգուցեալ կոյսը և կրկնապատկւում ու եռապատկւում է իր եռանդը։

Աւելորդ չենք համարում առաջ բերել այս տեղ վերև յիշւած հայրապետական կոնդակը։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

ՄԿՐԺԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒԽԻ ՔՐԻՍՏՈՍԻ
ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՈԲՆ Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթոլիկոս ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք համազական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածն։

Մաքրակենցաղ կոյս Մանեայ Շնորհունակ Մարկաւագուհոյ՝ Միաբանի Ս. Մտեփաննոս Անապատին Տփղեաց, հարազատ դստեր Մայր Աթոռոյս նուիրեմք ողջոյն և Առաքելական օրհնութիւն։

Ի յայտարար գրութենէ Գեր. Առաջնորդի Վիճակին Տփղեաց Տ. Գէորգ Արքեպ. ընդ

համարաւ 607. հասու լիալ Մեր հաւատարիմ և անքիծ ծառայութեանց հարմնացելոյդ երկնաւոր վեսային ընդ կուսական կողմանդ, ուրախ եղաք յոյժ, որ նուիրեալ զանձդ ի հանապազօրեայ պաշտամունս ազդոթից և պէսպէս բարեգործութեանց արժանի համակրանաց և գոհունակութեան կացուցեալ ես զքեզ. Քանզի որոց միանգամ նուիրեալ են զանձինս ի սպաս պաշտաման Աստուծոյ և արնին հանապազ ի նոյն, ապաքէն մեծ են վարձք նոցունց ևս առաւել որոց զաղցաւոր կենցաղոյս արհամարհիցեն զվայելցութիւնս և զփառս և ուրածին զթացն Քրիստոսի և ընթացան զնետ երկնաւոր Կոչողին որ ասաց. «Եկայք առիս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ»։ Եւ քանզի Դու քեզէն բարձեալ ես զայդքեռն Տիրական և մտեալ ընդ լծով նորին իբրև որոջ անարատ՝ յուսացեալ յամենակարող զօրութիւն Աստուծոյ որ զիտէ զտկարս զօրաւորս առնել և որոյ իսկ են պահեալ պատկիլ զաշմատաւորս և զհաւատարիմս իւը անթառամելի պսակօք. Մեք որպէս դէտ եկեղեցւոյ ի նըշան գոհունակութեան մերոյ շնորհիմք բեզ իրաւունս կրել զարծաթեայ ոսկեզօծ լանջախաչ առանց ձուլեալ պատկերի Փրկչին իբրև նշան անպարտելի ընդդէմ աներևոյթ փորձողին և որպէս յուշարար քոյոյ ուխտիդ Խաչակրութեան։

Փրկչին Աստուծած զօրացուցէ զՔեզ և

պահեսցէ անդրդուելի յայդնուիրական կոչումն յոր ուխտեալդ կաս և ի յաւիտենականին արժանիս արասդէ դասուց իմաստուն կուսանաց, որը վառեալ յապտերօք ելին ընդառաջ երկնաւոր Փեսային և ստին յառագաստն լուսեղէն։ Ողջ լեռ և օրհնեալ Աստուծոյ և ի Մէնջ, Ամէն։

Մկրտչ Կար. Ա.մ. Հայոց

Ի Յ Նոյեմբերի 1896 ամի 4
ըստ առմարիս Տ 2 Ա Զ
ի Հայրապետութեան մերում Դ. ամի
Արարատ, Մայր Աթոռ ս. Էջմիածնի.
թ. 1007

Հանգուցեալ սարկաւագունի Մանիա Լոռիս-
Մելիքեանի արած բարեգործութիւնները բազ-
մաթիւ են, բայց բաւականանում ենք այստեղ յիշ-
շել միայն նրանց, որոնց փաստաթղթերը կարողա-
ցել ենք ձեռք բերել։

Կոյս Մանիան լինելով վերին աստիճանի ուս-
ման տարածման նախանձախնդիր՝ իր բարեգոր-
ծութիւնները արել է մեծ մասամբ ուսումնա-
ծարաւ որը երեխաներին—տալով նրանց ուսման
վարձ։ սակայն չի մոռացել նաև ուրիշ կարիք-
ներ ունեցողներին։

Առաջ եմ բերում նաև Որնակ գիւղի բնա-
կիչների մասուցած ուղերձը, ուղղւած բարե-
կործունի կոյս Մանիային, որը վերոյիշեալ գիւ-


դի համար 1000 ր. ծախսելով ջրանցք է շինուամ։
Ահա այդ ուղերձը, որ տպում ենք նոյնու-
թեամբ և անփոփոխ։

ՈՒՂԵՐՁ

Մեծապատիւ սարկաւագունի Մանիայ Կոյս Լոռիս-
Մելիքեանց բարերար Մայրիկ

Զերդ Ազգասէր մայրութեան սէրը ստիպեց նու-
ստիս սիրաը ի դիմաց Երջանկացեալ մօրդ և յար-
գոյապատիւ հանդիսականաց փոքր ի շատէ բանախօ-
սութիւն անել, ողորմած Մայրիկ, Մարդս Աստուծոյ
երեւլի արարածոց մէջ բոլորից կատարելագոյն և զե-
րազանց լինելով՝ իւր մտաւոր նպատակն այնէ որ այս
անցաւոր աշխարհիս մէջ երջանիկ լինել այն է առա-
քինութեամբ։

Ուստի Մեծապատիւ հանդիսականը, այս մեր
Մանիայ Մայրիկը իւր առաջին առաքինական գործը
ցոյց է տւած մեզ իւր կուսակրօնութիւնը անբիծ վա-
րուք, որ մոռացել է իւր հայրենի տունը, փառքը,
հարստութիւնը, աղնւութիւնը, որ բոլորիս քաջ յայտ-
նի է թէ այս անձը ինչ բարձրագոյն ցեղից է, որ
միայնգամայն ուրանալով թողել է իւր տիկնութիւնը
և իւր անձը մատաղ հասակից սկսած մինչև հիմայ
նուիրել է Քրիստոնական այն խօսքին որ հրամայում
է թէ, որ ոչ ուրացի զհայր, զմայր, զորդի, զառն,
նաև զանձն, չէ ինձ արժանի, ևս առաւել բազմիցս ա-
ռաքինութիւններ թէև շատ ունի արած, բայց այսու
ամենայնիւ այս յետինը բարձրագոյն էր, որ բոլորո-
վին պաշտպանեց և աղատեց յունվար ամսի սահա-



մանիք գմնդակ ցըտից մեր աղբատիկ Որհակ գիւղի հասարակութեան կանանց և աղջկանց. ևս առաւել անըստան կենդանիներին, որոնց ձմոռան՝ սաստիկ ցրտումը առաւօտ երեկոյ խեղճ կանայք և աղջկունքը բորիկ ոտքերով կուժերն ուսներին ձեռքներն տկլոր իւրեանց անասուններն քշում էին դէպի գիւղից ցած փոքր առուակը, որ կարողանան ջուր խմացնել իւրեանց կենդանիներին և կուժերն լցնեն ջրով, բայց զգբաղդաբար պատահում էին խիստ շատ հաստ սառուցի որ չէին կարող կոտրել և ջուրբաց անել ուստի փոխանակ ջրի սառուցեալ օդով լիքը ոտքերներն մղկտալով և իւրեանց ճակատագիրն անիծելով յետ էին դառնում դէպի տուն. ուրեմն այս նեղսակրութեան առաջն առնելու համար յիշեալ մայրէկը շինել է մի պատուական աղբիւր և այն աղբիւրը, որից գիւղը անուն է վերցրել, որն է ակը ասելով, ակը մի վերսատ բութիւն ունի գիւղից, իսկ աղբիւրը գիւղին կից, արին փորած է մի արշին խորութեամբ, գաջով, կրով, աւազով և քարով ամուր շրջապատած, որ ահա աչքի առաջ տեսնում ենք.

Յարզոյապատիւ ունկնդիրը, մեր Մանեայ բարերար սարկաւագունին այս առաքինսական գործը վերցրել է Աւետարանի այս յօդուածից, որի մէջ Քրիստոս Տէր մեր հրամայում է թէ, մի բաժակ ցուրտ ջուր տալն էլ փոքրերին, երանութեան հասնելու միջոց է, ուրեմն մեր բոլոր որնակեցիք շատ տարիներով ամառն ցուրտ ջուր պիտի խմեն և ձմեռն տաք յարմար առողջապահութիւն, և այս անմոռանալի անմահ յիշատակը նուիրում է իւր մարտիրոսական մահուամբ հանդուցեալ աստիճանաւոր Ստեփանոս եղբօր հոգւոյ համար, որոյ վրայ արձանագրած է յիշատակագիրն մարմարեայ քարի, վրայ:

Ուրեմն այս բարեպաշտօն կուսի բարելաւութեան համար, մվ որնակեցիք երախտապարտ լինելով պարտաւուած պէտք է անկորուստ պահպանէք այս անմոռանալի յիշատակը, ձեր և ձեր որոդւոց մտաւոր յի-

շողութեան մէջ, և հետեւէք Քրիստոսական այն խօսքին, որ ասում է. արժան է մշակն ի վարձու, որովհետեւ բացի հարիւրաւոր փողեր խարջելու այս մայրիկը, նաև իւր փափկասուն մեծացրած անձը չարչարելով յուղիս ամսի արկե եռացած ճառագայթների տակ մշակների և ուստաների վրայ էր հսկում, ուրեմն սրա այս կատարելագործած մշակութեան գինը ո՞ր տեղից պէտք է ստանայ, մեզանից, ոչ, ուրիշ մերձակայ և հեռու իշխաններից, այն ևս ոչ, այլ միայն գերազոն անհուն և անսահման էութիւնից, այն ևս ի կատարածի աշխարհիս, որ կասէ սուրբ Աւետարանը թէ, եցին հրեշտակը և մեկնեսցին զշարս ի միջոյ արդարոց, ուստի մեր խական պարտաւորութիւնը այն է անջինջ պահել այս սուրբ յիշատակը և գոնէ բերանացի խօսքերով գոնունակութիւն շնորհել յիշեալ մօրը:

Ուրեմն Առաքելապատիւ բարձր սրբազան և բարեկրօն սուրբ հայրէք. կարկառեցէք ձեր ամենօրհնեալ Քրիստոսազօծ սուրբ աջերը և օրհնեցէք այս մեր մեծապատիւ հանգիստականաց խումբը և բարեհաճեցէք մաղթել Աստուածանից, որ սարկաւագունից նորոգ հանգուցեալ եղրօր հոգին արժանի անէ լսելու այն երանական ձայնը, որ պէտք է ասէ, եկայք օրհնեալք հօր իմոյ, ևս առաւել մաղթեցէք երկար կեանք մեր առաքինի Մանեայ մայրէկին, որ արթնութեամբ մնայ այսպիսի աղգօգուտ առաքինութեանց մէջ, ինչպէս պատուիրում է Սուրբ Աւետարանը թէ, արթուն կացէք զի ոչ գիտէք երբ գայցէ Տէր տանն, ուստի արթուն կենալն ոչ թէ քնոյ համար կասէ, այլ այսպիսի առաքինութեանց, և տան տէրն կնշանակէ մահուան հրեշտակը որ յանկարծ գալիս է առանց ոչ ոքի գիտութեան, ուրեմն բոլորս պէտք է Աւետարանի այս խօսքը միտքներս պահել ամենայն վայրկեանի մէջ, և օրինակել այս մեր Մանեայ կուսին, և ամենայն խրաքանչիւր անձն իւր կարողութեան չափ գործել առաքինութիւն, այն ևս ընկերն սիրելով, նայելով պատ-

ըելոյ այն խօսքին որ ասում է, եթէ ճամբիցիմ զամեմնայն ինչս իմ աղքատաց և սէր ոչ ունիցիս՝ ոչ ինչ իմ:

Յարգելի հանգիսականք, առանձին շնորհակալու
թեան արժանի են նաև իշխանուհի Քալի Երկայնա-
բազուկ Արդութեանցը, որ իւր սեպհական ծախիք կա-
ռուցել է Որնակաց եկեղեցին ևս առաւել իւր եղբայր
պայծառափայլ կնեազ Յովսէփ Երկայնաբազուկ Ար-
դութեանցը, այս միակ բարերարը իւր իսկական սեպ-
հականութեամբ նորոգեց մեր Սանահնի հնադարեան
սուբբ մենաստանը, որը արդէն քայքայուելու վրա էր,
որ այսպիսի հութիւնները անմահ յիշատակէ հայրե-
նեաց համար, և մեծ պարծանք մեր հայութեան, ու-
րեմն կեցցեն և միշտ կեցցեն այսպիսի իշխանք և իշ-
խանուհիք, որը անձնանուել էին հայրենեաց օգտին:

Ողորմած բարերարը թէև ըստ արժանոյն օրինաւոր չէ նուաստիս բանախօսութիւնը ի դիմաց այս մեծապատճե հանդիսականաց և ձերդ բարերաց, սակայն այսուամենայնիւ խոնարհաբար խնդրեմ ներել և ընկալենու զիտքը ի տկարէս:

Բարեբարացդ նուաստ որդի Պողոս Ռամազիանց
Սանահնեցի:

ի 23-ն օգոստ. 1881 ամի
ի պիւղն Արնակ

Մանիայի սրտին շատ մօտ է եղել որբերին
խնամելը և նրանց միսիթարելը, ուստի նրա ա-
րած բարեգործութիւնների մէջ աչքի են ընկ-
նում որբ կամ չքաւոր աղջկներին կարեմե-
քենաներ նվիրելը, որպէս ապրուստի միջոց և
նրանց կեանքի ապահովութիւն:

Իբրև ուսման տարածման նախանձախնդիր,
ինչպէս վերև յիշեցի, նա չի մոռացել նաև չքա-
ւոր ուսուցիչներին նպաստներ տալը, որը նոյն-
պէս մեծ տեղ է բռնում իր արած բարեկող-
ծութիւնների մէջ։

Կան բարեգործներ, որոնք միանգամից հա-
րիւր հազարներ են նւիրում մի որևէ է հիմնար-
կութեան, և դրանով օգտում է միմիայն այն
հիմնարկութիւնը, որը ստացել է նւէրը. բայց
այդպէս չի եղել հանգուցեալ կոյս Մանիան, նա-
ինքն է եղել չքաւորի, քաղցածի, ուսումնածա-
րաւի, երկրաշարժից մնաւածի և այլն դրու-
թեան մէջ մտնողը և իր ժամանակին հասցըել
իր օպնութիւնը:

Այդ ցոյց կը տայ մեզ հետևեալ ցուցակը,
որը առաջ ենք բերում այստեղ:

8 n h 8 u 4

- Ախալքալաքի երկրաշարժից զնասուած-ների օգտին 50 լ.:
 - Շահվերդեանների երեխաններին՝ կարէ մեքենայի համար, իբրև ապահովութեան միջոց 40 լուրի:
 - Կոստանդին Տէր-Աստւածատրեան ուսուցչին՝ իբրև գրամական օգնութիւն 190 լ.:
 - Գուլամիրեան Արշակիրին՝ Օրբէլու պանսիօնում ուսման վարձ 80 լուր.:
 - Գէորգ և Տիգրան աշակերտներին՝ եր-ըորդ-արական գիմնազիայի ուսման վարձ 360 լ.:

6. Հմայեակ Մանուկեանին քաղաքային դըպ
բոցի ուսման վարձ 54 լ.:

7. Սովիա և Կարապետ Բագրատունինը ինքը՝
երրորդ իգական և երրորդ արական գիմնազիա-
ների ուսման վարձ 410 լ.

8. Բաղդասարեան Վարդասին՝ երրորդ արական գիմնազիայ ուսաման վարձ և հանդերձ գնին 495 լ.:

9. Ղանաւուզեան Արմենակին՝ ուսման վար
674 բութի:

10 Կոյրելի գպրոցի սաներին՝ ուսման մարձ 40 յուրիի:

11. Խըմեան Հայրիկին՝ Փիլիպոս Վարդանեանի ձեռքով սովեայների օգտին 200 ր.:

12. Նիսո Շանշեանին տւած է 120 բուք
Աղբուլազի եկեղեցու պատուհաններ շինելու
համար:

13. Զրի և էժանազին՝ ճաշաբանին՝ ճաշա-
մին 40 ըսութ:

14. Կուսանաց եկեղեցու մուտքի դրա
ծածկոցի և եկեղեցու վառարանի համար 90 լ
60 կոտ.

15. Օր. Անդրէասեանին՝ երրորդ իգական
սեմ նասիհաւի ուսման վայր 35 բուրփի:

16. Ստեփան Արգարեանին՝ երրորդ արականինասիակամաց ուսաման վարձ 35 բուրփի:

17. Կար ու ձեի դպրոցին նպաստ՝ 3 ր.;
 18. Աշնեւ Յանեսովեանեն՝ Ա Եղանի պար

19. Յակի առաջընթացը է, ուշը ու բարձրացնելու մասին պատման վճար 6 ըստը։

թեան համար 9 ըստիկի:

20. Էջմիածնին՝ Աստուածաշնչի տպագրութեան համար 5 րուբ.³

21. Օրիորդ Աննա Լոռիս-Մելիքեանին՝ Մարիամեան. Յովաննան դպրոցի և գիմնազիայի ուսման վարձ 373 բուք.:

22. Օրիորդ Մարիամ Զալեանին՝ Մարիամեան. Յովաննեան դպրոցի ուսումնավարձ 162 թ.:

23. Կուսանաց եկեղեցու և Ստեփանոսի
պատկերի համար (պահարանով) 50 ըուբլի:

24. Սովեալների օգտին՝ Սահակ քահ. Սահակեանի ձեռքով նսիրաբերութիւն 25 ըուբի:

25. Առնակ գիւղի աղբիւր շինելու համար
1000 րուբ.:

Կոյս Մանիան աչքաթող չէ արել նաև ի-
րանց վաճքը: Նրա ամեն մի պակասութեան հա-
մար նա ցաւ է զգացել և նրա անարատ գոյու-
թեան նախանձախնդիր է եղել: Պաշտել և սիրել
է նրան, և նրա սուրբ գաղափարը իւայփայել:

Առաջ ենք բերում Սանահնից ուղղւած Մարտիրոս վարդապետ Մժեժեանի օրհնութեան նամակը գրւած 1877 թ. փետրվարի 2-ին:

Աշմանապատիւ աւագ սարկաւազ Մանի կոյն պայծառափառը Մօղ Ծիստանկան օրհնութեամբ.

ՍԻՐՈՅ ՄԱՅՐ, զիտեմ, որ ինձմէն քաջ տեղեակես, որ մարդուս սրտի թարգման իւր լեզուն է, լեզուի թարգման սրանցին գրիչ, իսկ գրչի թարգման հեռա-

ւոր բարեկամաց սիրոյ պատգամատար զբութիւն, ո-
րուն համար նուաստիս սիրաբոր սիրոյ կա-
ըսոր պարտը զբչին ծայրով փաթաթած սպիտակա-
նիշ թղթեայ վարշամակի մէջ ձեզ հոգեոր չքնաղ սի-
րելոյդ կնուիրեմ իրոյ Աստուածային օրհնութիւն:

Հստ որում սիրոյ զգացում մի առաքինազարդ
հոգեոյն Աստուածային կամաց ամենաառատ պարզեն է,
պատճառն որ Սէրն է Աստուած, և Աստուածութիւն
իսպառ զլխովին սէր և սիրահարութիւն, նաև անհա-
տահոս Աղբիւր սիրոյ, որ զգացոյ հոգեոյ մէջ միշտ
սիրելով կհոսի, և իւր ազգական զօրութիւն զինք սի-
րող հաւատացեալ հոգեոյն կներգործէ իւր ամենաառատ
ծաւալով:

Ուստի ուր կայ Աստուծոյ՝ սէր, անդ և սիրող
սրտի յօժարութեան զուգայարմար կամեցողութիւն,
համեմատաբար զգալի լուսոյ և հայելոյ, որովք ըմ-
բռնած երկու լծորդե հոգին և տենչալի սէրը Աստու-
ծով շաղկապած, թէպէտ երկու առընծակիցք, Աստուած
և հոգին զուգահաւասար չեն սիրելութեան հորիզոնի
վրայ. ըստ որում սիրելութիւն, այսինքն Աստուածու-
թիւն անհուն, զերագոյն, անստեղծ էակ և բարձր, և
մինչև անզամ խելքէ և մաքէ վեր. բայց հոգին որով-
հետև Աստուածութեան երկրպագելի կամաց պատկեր
կրող իւր հայելու մէջ, կարող չէ համեմատօրէն Աս-
տուծոյ զուգահաւասարի, բայց միայն մազնիսական
զօրութեամբ որքան առնչացած է Աստուածութեան սի-
րոյ գերսքանչելի քաղցրութեան հետ այնքան միշտ
իւր կամաց յօժարական սիրահարութիւն իւր սիրել-
ոյն մարդասէր կամաց դշնոյն է կամ թագուհի կազ-
մած, և կարելի չէ իւր առնչական կամ մազնիսական
հայեցուածք սիրոյ յօժարութեան որոշել, զատել և ուլ-
կարող է ջոկողութիւն առնել, և իմանալ թէ ժկ է սի-
րող, և ժկ սիրելին:

Իսկ այնօւամենայնիւ երկու սիրելեաց մէջ, հո-
գին սիրով զարդարուած և դշնոյացած ակնյայտնի է,
չէ թագուն, այս միզ կմակարերի իրոք երկու առն-
ել չէ թագուն, այս միզ կմակարերի իրոք երկու առն-

չակից անձը, օրինակի համար, եթէ դու սի որոշ մարդ
կամ կին, իբրև Հայր կամ Մայր սիրես, ուստից ես
հոգեով և սրտով անբաժան նոյն և քեզ հաւասար հոգ-
եոյ պէս, ի բաց առ մարմնաւոր ցանկութիւն, այլ թէ
բոլորով սրտիւ անկեղծ Աստուծով, որով կապուած են
անքակ, միմեանց մահ այդ ձեր առնչակից ազատ եր-
կու անձը պիտի զատէ, այլ չէ այդպէս, վասնզի մար-
մին ոչինչ է, և ոչինչ օգտէ, հոգին է Աստուածային
սիրով կենդանաբար, Տիրոջ ասածին պէս:

Ապաքէն հիմայ երկութիդ մէջ, քանի որ Աստուա-
ծային սքանչելի ներգործութիւն կայ, սուրբ սէր կայ
ձեղ կալած, դու և սիրելիդ սիրով անբաժան լծորդ էք.
և անմահ, ըստորում մահ չկայ. միայն մարմնաւոր
հանդերձ կամ մարմին իսկ առ ժամանակ ինչ պիտի
փոխէք. ըստորում աստուածային վճիռ է մեր անհնա-
զանդութեան մասին. բայց ձեր հոգին անմահ սի, և
աստուածեղէն սիրոյ հետ շաղկապ. ըստորում քանի որ
սիրոյ գործ սիրելութիւն է և զինք սիրել տալ, մա-
սնաւանդ որ ձեղ նորա համար է ստեղծած, և ինք աս-
տուածեղէն սէր քանի որ արմատացած է ձեր մէջ, իբ-
րև երկու հաւասարակշիռ սիրահար հոգեոյ մէջ, և իւր
սքանչելի ներգործութեամբ իւր հետ ներփակած, թէ
աստ և թէ անդ երկնքում զինի աստի փոխման, դուք
սիրողքդ, և ձեր սիրելի և պաշտելի սէր անդրադար-
ձէք սիրողաբար, ըստ որում զուք սէր կպաշտէք, և
սէրն անորակ ձեղ միշտ կսիրէ, այսպէս և տիեզերաց
մէջ ամենայն սիրահար հաւատացեալը, որոնց վերջին
ձիգն և աշխատանք փափաք և կարօտութիւն առնուն
է տենչալի իղձով սիրոյ քաղցրութեանէն. ըստորում
գործնական համեմատութեամբ սէր պաշտել և սիրոյ
սիրելի լինել մեծ բան է և աստուածային առաքի-
նութիւն:

Ահա այսպէս իմ սիրոյ Մայր և Կոյս, զու մի
սիրտ ունէիր սիրոյ առնչակից և հաճոյական, այս
տեղս մեղ սիրոյ զրաւ թողիր աւելի թէ նուիրական
զոհ ձգեցիր, և մեր սիրայրած սիրտը մեր հոգեով և

յօժարութեամբ քեզ գրաւ սիրոյ աւար տարպար, ուստի ձեր և մեր առետրիկ աստուածելէն սիրոյ զուգահարութիւն կամ Աստուածային սքանչելի սիրոյ զուգում կամ չքնաղ զուգաւորութիւն եղաւ սիրոյ դաշնագրութեան մէջ սիրոյ գրաւ, որով երկուքիս հոգւոյ և կամաց մէջ սէր դրոշմեցաւ, մեր և ձեր գրաւականութեան հաղորդակցութիւն, արդեօք այսպէս չը, եթէ ճշմարիտ է, հապա անկարելի է երբէք մոռացկոտութիւն կամ թմրութեան մէջ անջրպետել և տիրել, քանզի ինձ այսպէս կթուի թէ աստուածային սէր ուր կայ, անդ քուն և թմրութիւն հերքուած կտեսնուի. վասն զի Աստուածան ամենուրեք է, արթուն և անքուն պահապան իւր սիրելեց.

Հստորում Յիսուս նուր երթար, որ իւղաբեր կանայք և իւր սիրոյ աշակերտք իրմէն բաժան լինէին, ևս ընդ ձեզ եմ միշտ. ասաց, ո՞ր վայրկեան Մարիամ Մագդաղենացին առանց Յիսուսի կարէր մի ժամ որոշ մնալ, ո՞ր ակնթարթ միջոցով կարաց Սանդուխտ կոյս թաղէոսէն. կամ թեկզին Պողոսէն ջոկուիլ, ո՞ր կէտ և ոչ մի նիրհ կարողացաւ Հոփիսիմէի կուսին տալ, աչք Քրիստոսի Աստուածային սիրոյ շաւիդէն ետ թեքել, ոչ ապաքէն միշտ սըրամաքուր կուսանք Քրիստոսով միմեանց սիրեցին, մէկ հոգուով և սիրով ապրեցան, և մեզ այնպէս առնել ուսուցին. իսկ եթէ նոցա մայրական սիրոյ որդեգիր աշակերտ ենք, ոչ ապաքէն պարտաւոր ենք սէր յարգել, և սիրով միմեանց միշտ յիշատակել բանիւ կամ գրով:

Սրանչելի սիրոյս մայր, շնորհաւոր ծնունդ և Աստուածայաւանութիւն, ձեր կուսական մաքրութիւն այնպէս ինձ կմակաբերի. որ առաքինութեամբ և աստուածային բարեկապաշտութեամբ լի և ճոխ, Յիսուսի երկրպագելի ծննդեան վերայ խորին մակածութիւնը կունենաք, հաւատաով այնտեղ ներկայանալ, և ուշի ուշով խելամտիլ այս աւուր նոր հրաշալի խորհուրդ. որնո՞ր ի յաւիտենից անքննելի կար ծածկուած աշաւարհիս սկզբէն եղած բանաւոր իմանալի և զգալի

էակներէն. այսօր սիրոյ ներգործութեամբ յայտնեցաւ մարդկան Աղջին կուսական Ծննդեամբ, վամնորոյ հրաշափառ է այս աւուր տօն սքանչելի, ըստ որում Աստուած մարդ յայտնեցաւ, մանուկ ծնաւ խանձարապատ անբանից մսուրքի մէջ, որուն համար երկնաւորք վայրի ջան, Աստուածայտնութեան մեծահանդէս աօն կկատարեն, որ արարածական մտաւոր գիտակցութենէն գերսչքանչելի է:

Ապաքէն անա երկիր երկինք եղաւ, և աստուածային առատանոս սիրոյ անհատնելի Աղբիւր Բէթէ-հէմի մէջ այս կենավայր այրիին մէջ, ուր կայ մանկացեալ և հին աւուր անժամանակ ծնունդ, ուր աստուածային Աթոռ կազմեցաւ. հրեշտակաց լուսատեսիլ բազմութեան ակումբ առեալ շրջապատած նորածին Յիսուսի երկնաւոր և մշտնջենաւոր թագաւորին բոլորտիք սաւանմամբ և փառատրութեամբ կերպեն Փառքի բարձունս Աստուածոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութրւն և օրհնութիւն քեզ ի բարձունս», այս ևս հիացմամբ և սիրալիր դողութեամբ, և մէկ կողմէն սուրբ զուարթուն խաշնարած հովիւներուն ուրախութիւն մեծ կաւետարանէ ասելով, «աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, զի ծնաւ ձեզ Փրկիչ, որ է օծեալ Տէր ի քաղաքի Դաւթի. և այս նշանակ ձեզ գտանիցէք մանուկ պատեալ ի խանձարուրս և եղեալ ի մսուր անբանից» այս յեղակարծ պահուն հիացան հովիւր զարմացաւ աշխարհ. ցնծացաւ ամենօրնեալ սուրբ կոյս, բերկութեամբ լիցուաւ Աստուածահայր ծերունին Ցոլսէփ ակն յառած երկրպագելի մանկան:

Աղամ նախահայր գլուխ շարժած բարոյական խանդիւ լիք ձայն կտայ իւրածին սերնդոց սգազգեստ մթութեան խաւարապատ բնութեան քօղը պատոել, և լուսաւոր մկրտութեան պատմուճան հանգնել. Եւայ նախամայր իւր անմեղ կոյս զստեր ոտքն անկած ծառայի պէս և մէկ կողմէն ձեռք նորածին մանկան պարտ կելով մանկաբարձ կամ զահեալ լինել կաղերսաբանէ, զելով մանկաբարձ կամ զահեալ լինել կաղերսաբանէ, և նոր սքանչելի յեղափոխութեան պայծառ փրկութեան

լուսարփի պատմուճան հողոյ վրայ զգեստաւորած կփարի մանկան շարջ. Եղիսաբէթ, Սոլոմէ, Աննան, Մագդաղենացին ուրիշներուն հետ տիրածին կուսի մերձ պար առած իրենց փրկութեան դաշնակի քնար կերգեն, ու նորածին մանուկն Յիսուս իւր մօր հետ կողմաբանն:

Իսկ նախահարք Աբրահամ, Խանակ, Յակոբ նախամարգարէ Մոլուէս, միւս տեսող հոգեգուշակ մարդարէից ակումբով, Դաւիթ Աստուածահայր մարդարէն ամէնուն պարագլուխ սաղմոսարանի քնար սուրբ հոգւուն կազմած տաւիլ լիք օրհնութեամբ Յիսուսի, նոր Արքայի փրկարար գալուստ, ծնունդ և Աստուածայայտնութիւն հնչեն և կծափահարեն ի ձայն դայլայլ և կդեղգեղեն ամովսածին իւր ներդաշնակ յառաջ բերելով Դաւիթի հոգերգակ քնարի հետ կասեն. «ահա կոյս յդասցի և ծնցի որդի, որ թարգմանի ընդ մեղ Աստուած». առաջին կլուսաբանէ թէ, Տէր ասաց ցիս, որդի եմ ես, և ես այսօր ծնայ զըեղ. այսպէս պայծառ հրեշտակային օրհնութեամբ հոգեզմայլ հնչումով իրենց հրգոց քաղցրութեան քնար երկինք բարձրացնելով կհնչեն և կերգեն:

Իմ սիրոյ Մայր և քոյր, սուրբ Հոգոյն ներդաշնակի երգեհօն, գուք աւելի քաղցր հնչել գիտէք, և շատ սիրոյ աշակերտ ստանալով, նախակիրթ մայր էք պաշտելի սէր գովելու, ձեր մայրենի սիրոյ դահեկութիւն Աստուածային փրկարար սուրբ սէրն է. զորն որ կտնիկ ջերմ հոգւով և յօժար կամօք պաշտելու կտածէք և համոզուած էք քաջ ճանաչել, և տիեզերաքարոզ լինել կարող էք շատեր առաքինութեամբ աշակերտել սիրոյ մայրենի դահեկութեան:

Ո՞չ ապաքէն սուրբ հոգով ուսածէք. ինչպէս որ սէր անուն Յիսուս իւր երկրպագելի ծննդեան և Աստուածայտնութեան համար հրաւիր սիրոյ բացաւ երկնաւորաց և երկրաւորաց խմբովին գալ սիրով, և երկրպագել իւր անճառելին մանկացեալ ծննդեան և Աստուածայայտնութեան լուսատեսիլ սուրբ փառաց,

որով մեր փրկութեան համար յանկարծ մարդասիւածէս յայտնեցաւ, մեղ հոգի և կեանք պարզել:

Ապաքէն սուրբ կոյս, տեսմբ սիրոյ հրաւիր, որ սուրբ այրիի մէջ, և այրի վրայ անթիւ և անհամար երկնից իմանսալի կաճառաց բոյլք հազարք հազարաց և քիւրք բիւրոց միանգամայն հիացած և զարմացած, ահիւ և գողութեամբ լիք, խոնարհեցաւ սիրոյ երկրպագութեան, և միւս կողմէն լուսատեսիլ նորանշան աստեղէն՝ առաջնորդութեամբ, երկրաւոր հզօր թագաւորք երեքեան, Մելքոն, Գասպար, և Բաղդասար արևելքէն, Հայաստանի կողմէն դիմելով խուռն բազմութեամբ գումարուած սուրբ Բեթէհէմ հասան, իրենց տիեզերանոչակ քարող չորս կողմն ամենուրեք կարգալով հրաւիրակ եղան նորածին Արքայի, Աստուածորդի Յիսուսի փրկագործ և պաշտելի յայտնութեան համար:

Այս երկրպագելի և պատկառելի հրաւիրանաց համար թէպէտ գոռող Հերովդէս սաստիկ խոռվեցաւ, և ամենայն երուսաղէմ նորա հետ, մեր ընութեան խարբալող բանսարկուի ամբարտաւան գրգումով, որով Հերովդէս խորամանկեց գաղտնի դարան գործել, Յիսուսի ման կութեան համար որոգայթ պեղել բայց գաղտնեաց քննողին առաջ խայտառակեցաւ:

Իսկ սիրոյ հրաւիրած սբանչելի մոգեր սիրոյ ազգմամբ իրենց փափաքին հասան. Յիսուսի սիրոյ փըր կոչօնքի աիեղերահանդիսին ներկայացան, և իրենց ծնկամած խոնարհ երկրպագութիւն նուիրելու արժանաւորութիւն մատուցին. նաև իրենց հաւատոյ, յուսոյ և սիրոյ հետ արժանաւոր Արքայական ընծայք, ոսկի, զնորուկ և զմուռս ջերմ հաւատով նուիրեցին. այսպէս և առնչացան երկնաւոր սիրոյ հետ, սիրոյ այսպէս և առնչացան եղան, և սէր հոչակեցին բոլոր տիեզերաց մէջ, շակերտ եղան, և սէր հոչակեցին բոլոր տիեզերաց մէջ, ուր կան մարդկան ապգը!

Ապաքէն հոգւոյս Մայր, շատ քաղցր կերեխս սիրոյ հրաւիրանաց մէջ, և կամիս սիրոյ քարող լինել. թէպէտ մարդկան Ազգ միշտ սիրոյ կարօտ, միշտ սիրոյ քողոք կարդալով, միշտ սիրոյ ման կգային յառաջ ըան

զծնուռնդ սիրոյ, ինչպէս խսրայէլացւոց Աստուածապաշտ Աղքա. բայց որովհետև սիրոյ թշնամին անօրէնութեան հեղինակ, այնքան յանդգնեցաւ, մինչև անդամ ինք զինք ծպտեալ սէր ձեացուց, և իբրև ճշմարիտ սէր մարդկան ընութիւն իրեն ձգելով մոլորեցուց, և այնպէս Աստուծոյ գրկէն գրկեց, սրա համար պաշտելի սէր մարդակեր գաղանին խայտառակիելու համար շօշափելի եղաւ մարմնով, սէր Աստծուն Յիսուս մանուկ ծնաւ, և խանձարապատ մսուրբի մէջ անբանից առաջ աղքատօրէն դրուեցաւ, այն որ երկինք ու երկիր լրիւ անբաւական էին տանել, մարմնոյ մէջ ամփոփած նուռստացաւ. յայտնեցաւ հրեշտակաց և մարդկան. բայց իսպառ անյայտ մնաց հակառակորդ իժ բանասարկութիւն, որ իւր մոլեռանդ տարակուսութիւն Հերովդէսով ուղեց լուծել, որուն համար դարանակալ օձի պէս դալարեցաւ Հերովդէսի սրտի մէջ դարան մտաւ, և զործել խորամանկեց, որ սիրոյ կինդանութիւն բառնայ, Յիսուսին սպաննել տայ:

Իսկ Աստուածամարդ Յիսուս հինաւուր մանկացեալն Աստուած տեղի տուաւ չարագործին, որ աղմկէ որքան կամի, որ աւելի խայտառակուի, և ինըն իբրև անզօր և տկար մարդ իւր կոյս սիրական Մօր դիբկ թեթե ամպի պէս գնաց հալածեցաւ, բայց ուր գնաց իւր մարդասիրութեան հրաւէր և այցելութիւն չխնայեց աղքատաց, կաղաց, կուրաց, գոսացելոց, ախտաւորաց մարմնաւոր և հոգեւոր ցաւեր բուժելու ինք դինք չխնայեց գերահոչակել գործով:

Սիրոյ Մայր, այսպէս Յիսուսի սիրոյ հրաւէր շատ տեղ տարածուած տեսնելով, մասնաւոր մարդիկ հոգևորեցան, և այսպէս Յիսուս սիրոյ Աղքիւր ի լրանալ ժամանակի, գետ Յորդանանու մէջ կամաւոր խոնարհութեամբ չարին գլուխ ջախջախեց մկրտութեամբ, և քառասուն օր միանգամ ծոմապահութեամբ մեզ օրինակ լինելու իւր հակառակորդի կարծիք ջրելու և նրա խարէական փորձութիւն խայտառակելու, յառաջ անցաւ. հանդիսանալ իւր Աստուածութեան փրկագործ

վարդապետութիւն ժողովրդոց աւետարանել և լուսա-
բանել, և առհասարակ մարդկան Ազգը իւր սիրոյ կո-
չօնքի հրաւիրել, թէպէտ մարդ մէկնիմէկ անկարացաւ
ծանօթանալ Յիսուսի մարդասիրութեան գերահրաշ
խորհրդոյն, իրաւ զինք շատեր կալան տփիտարար
թագաւոր կարգել, որ առօրեայ այս կենաց մէջը երջա-
նիկ լինին. բայց սէր Անուն Յիսուս այնպիսի տկար
մարդկային հնարից ծուզակ իսպառ չսեղմելով, իւր
երկնաւոր արքայութեան փառաց հանդիսարան բացած
իւր Աստուածային մշտնջնաւորութեան արժանաւոր
տեսոյն հրաւիրեց իւր հետեղը:

Ուստի այս պատճառաւ իւր փառաց արժանաւոր
սիրոյ աշակետաց հետ սկսաւ զիւղէ գիւղ քարոզելու
և դէպ ի թափորական լեռի զլուխ ևեմիլ ու բարձրա-
նալ, ուր իւր երկնաւոր փառք նախապատրաստ էր
աշակերտաց ցոյց տալ, այն փառք, զորն որ կանխիլ
նախամարդոյն Աղամայ տուած էր իւր Աստուածացեալ
պաշտելի մարմնոյ վրայ նկարագրուած կամեցաւ յայտ-
նիլ, որ առաքեալը Քրիստոսի սիրոյ հետեղաց քարո-
ղեն և հանդէս բանան, Յիսուսի այլակերպութեան լու-
սաւոր կերպարանք բացայատեն հրաւիրելոց, ինչպէս
որ Յիսուս մելին աշակերտաց հոգոյ մէջ զգալի երե-
ւութով իրապէս տպաւորեց, և իւր Հօր Հայրական
ձայնին հրաւիրանաց արժանացուց, ինչպէս որ Յոր-
դանան գետին եղերք զինի մկրտութեան Յովհաննէս
Մկրտիչ այլոց հետ արժանաւորութիւն ունեցան թէ
Հայրական ձայնին, և թէ սուրբ Հոգոյ աղաւնակերպ
երեւումին:

Սիրոյ Մայր, գիտեմ աչք զգած կ ականչը ու
զրութեանս, ուր ինչ որ մակածելի նկարապրութեամբ
քեզ կներկայանայ հաւատոյ յօժարութեամբ, ըստ ո-
րում սիրով գրաւուած ու յափշտակուած ես, սէր Ա-
նոն Յիսուս երեսուն երեք տարիէն յետոյ երբ
երկրի վրայ իւր մարդասիրութեան խորհուրդ աս-
տուածաբանելով աւարտեց և հակառակորդի լարած
թակարդները քակելով խայտառակեց, կամաւորապէս

շարչաբանաց բաժակ խմելով մարդոյն սիրոյն համար ինք ճշմարիտ սէր մարմնով խաչեցաւ, իւր կամաւոր երկրպագելի մարմնոյ արիւնային պատարագ Հօր Աստուծոյ նուրիբելով, իւր կախաղանի փայտ մեր կենաց կենագործ փրկութեան զործիք պատրաստած պարզեց և ինք զինք բացայայտ թշնամոյն յայտնեց, ցոյց տուաւ, որ բանսարկուի իշխանութիւն ոչինչ եղաւ, մահ բարձաւ, մեղը խափանեցաւ, մեղաց տագնապն անցաւ. և ապա Աստուծածացեալ մարմնով զերեզման իջաւ, և հոգլով բանսարկեալ հոգլոց այցելութիւն գընաց. մահու բանտ բակեց, և միջի արգելուած հոգիք աւար առնելով երկինք Հօր փառաց որգեգրած արժանացուց:

Սիրելի համեստ Կոյս, զգացի քաջ, որ սիրոյ գովելի գործոց սիրածոր հանգամանք քեզ ազգու ներգործեց, որոյ զգացում ըեկ սիրական միշտ լինել կարծիքն աւելի է, բայց աւելի քոյդ տիրական փափաքիդ, երբ անհամեմատ սիրով Մագղաղինացւոյն պէս կամիս և տենջաս լսել թէ սէրն յարեաւ, արդեօք այն փրկարար կէտին Բնչ ուրախութիւն, Բնչ ցնծութիւն և Բնչ զմայլելի խնդութիւն պիտի քոյդ բաղձալի ուրտին չափրէ, ուր արդէն սէր զիլսովին թագաւորած և տիրապետած է, և ուր սուրբ հոգին կայ. և իւր սրանչելի կենագործ սուրբ սէր գրոշմած ունի. քաջալաւ կմակարերես, որ սիրոյ յարութեան հաւատն է, և հաւատան հոգւոյդ կատարեալ փրկութիւն, իրաւ սէր Անուն Յիսուս իւր մարդեղութեան գործ աւարտեց, և Աստուածային ամենազօր իշխանութեամբ կռածոյ կոյս գերեզմանէն յարութիւն առաւ, պահապանք զարհութեցան, հրեայք անհաւատութեամբ՝ գայթակղեցան, Պիղատոս զարմանալով ահիւ և զողութեամբ պաշարեցաւ, անթիւ ննջեցելոց գերեզմանք բացուած՝ յարութիւն առան և քաղաքի փողոցներուն մէջ Յիսուսի կենարար յարութեան կենաքարող եղան, աւելի անհաւատ հրէից հրաւէր սիրոյ կարգացին, սիրոյ հանգիստին առագաւատի զուռ բացաւ, արժանաւորք խմբովին

Ներս հըաւիրեցան, անիրաւ դատաւոր հքէից նախանձու կոյլ ատելութեան արծաթով կաշառեցաւ, Քըիստոսի մարմնոյ գողութեան համբաւ քաղաքի մէջ և շուրջ արտաքոյ տարածուեցաւ, պահապանք դատաւուրի երկիւղէն աղատ, ճշմարտութիւն ստել յանդպնեան, և այնպէս գերեզմանի դրօշմած կնիք շօշափեցաւ:

Ով անհուն ողորմութեան սիրոյ, անմիջապէս ան
տես մնաց իւր սիրահար սիրելիաց աչաց, որոնք տըըստ-
մախառ ուրախութեամբ Առաքելոց դարձան, երբ չկա-
րացին գէթ կրկին յարուցեալ սիրոյ տեսութիւն վայե-
լել, իսկ Մազդաղինացին գերեզմանի շուրջ իւր հաւա-
տոյ Աղքահարին մանգալով, իւր հոգոյ բազմանաց անյագ
հաւաստիք կրկին ձեռք բերելու, հըեշտակաց լուսափայլ
ընդունելութեան պատահեցաւ, վերստին սիրոյ յարու-
թեան ձայն լսեց. և անմիջապէս հարցուփորձի բռու-
նուեցաւ, չէ աստ, Յիսուս Նախովեցին, այլ յարեաւ,
կամ թէ զի՞ ինդրես զկենդանին ընդ մեռեալս, այս
լսեց Մազդաղինացին, և սիրով այլայլեցաւ և այն
կէտին հրեշտակաց սքանչելի շարժմունքն անայլայլ
յետ քամակին դարձաւ, սէր պարտիզպանի ծպտեալ
կնոջ զմայլելի դիմաց ներկայ հանդիսացաւ, նրա տար-
փալի սրտի բորբոք զիջուցանելու համար սիրտփառ
հարց արաւ, կի՞ն զի՞ լաս, զ՞ն ինդրես:

Ով սքանչելեցու, զարմանալի պահ, զմայլութեա
սարան, Յիսուս լսեց կնոջ պատասխան. ՏԵՇ, եթէ զու-
բարձեր զնա, ասա ինձ, ես իմ սիրոյ Աղքիւրին եր-
թամ, ով սէր, Ի՞նչ քաղցը ես, ով զարմանալի պար-
տիզպան, խնդրեց կին ըացայայտ խօսել, իւր սիրա-
պարտիզպանին բանալ, եթէ պարտիզիդ զնաս տալու

համար զու զայն գերեզմանէն բարձիր, մւը տարար,
մոք զրիր, որ երթևեկ քոյդ բազմաշխատ բրտանց վաս-
տակ, պարտիզիդ բերք ոտնակոխ անելով՝ չտրորէ, ա-
ռաջ ինձ, ինչ արիր, մի անտես պահիր ինձմէ, ես կը
փափաքիմ զայն տեսնել, և նոր երթալ:

Բայց զիտես սիրոյս ընթերցող, այս տեղու Յի-
սուս Հօր Էական սէր իւր զիմակի փոխեց, և մեկին բա-
ցայայտ իւր տիրական կերպարանքով Մարիամին կան-
չեց, Մարիամ, մի մերձենար յիս, ես քոյդ ինդրած
սէրն եմ, որ խաչ ելայ, քեզ համար չարչարանք կրե-
ցի, քեզ համար խաչին վրայ առած մարմնովս մեռայ,
քեզ համար ի գերեզման թաղուեցայ, և հիմայ ևս քեզ
համար ինքնազօր իշխանութեամբ յարութիւն առայ,
հիմայ իմ սիրոյ աշակերտաց գնա, նոցա սիրոյդ գե-
րահրաշ յարութիւն պատմէ, սիրոյս տեսութեան հրա-
ւիրէ, մի տրտմիր, այլ ցնծութեան բերկրանօք ուրախ
կաց, ասա թող իմ սիրոյ արքայարան, իմ սիրոյ տա-
ճարը հաւաքին, ուր ես նոցա ժամադիր եղայ, զիս
այն տեղը տեսնելու արժանաւորութիւն իրենց ցոյց
տալ կպարզենմ. իսկ Մարիամ ըստ որում բոլորովին
վիրացեալ, իւր սրտի երկնապարզ խանդէն անմեկնե-
լի սիրոյ փարել կամցաւ, և սկսաւ հանճարեղ մտօք
անքննելի սիրոյ մաքմնաւոր չարչարանաց վէրքը շօ-
շափել, որուն համար ինդրեց ձեռաց ոտից ընենաց,
կողից խոցուած համբուրել և վիպագրել:

Աղաքէն ստիպեցաւ երանեալ կին սիրոյ պաշ-
տելի կողի զոյդ խրցուածոց վտակեալ ծորակներուն
դէմ իւր սիրահար հոգոյ մաքուր սափոր տալ, ըստ
որում սիրոյ կենսատու Աղբիւր գտաւ, ուստից բաց
թողուլ և այլ տեղ մեկնիլ իրեն անհնար թուեցաւ,
ըստ որում Մագդաղինացին այս կէտիս, ոհ, այս երջա-
նիկ պահուս սիրով յափշտակուած սիրոյ զիրկ բեն-
եալ անբաժանելի մնաց, թէպէտ սիրոյ կենարար
ձայն ստիպողական բարող, որբան զմայլելի, որքան
տարփալի և պաշտելի էր, և բարձրաբարբառ, աւելի
թէ Աստուածաբար, սքանչելի կնոջ կաւետարանէր ա-

եւտեաց հրաւէր, որ սիրոյ յարութեան ներդաշնակի
երկնաւոր հնչում, Աստուածային գեղգեղ, Յիսուսի կե-
նարար զայլայլ առաքելց լսելի լինի, մանա-
ւանդ սէր Անուն Յիսուս կամեցաւ վազքաջ իւր սիրոյ
աշակերտաց սգազգեց տրտմութեան քօղը պատել
և սուդ փարատիլ, ուստի գարձեալ Մագդաղինացու
սրտի յօժարութեան և հոգոյ բաղձալի տեսչին ծանր
թուեցաւ, ըստ որում իւր միակ Ապաւէն սէր իւր հո-
գոյ Փրկիչ, իւր գերախնամ բարերար տէր միանդամ
ձեռք ձգած և ամուր կալած էր, ինչ կարելի, որ
կըկին բաց թողու, սիրահոս կըկնավատակ պաշտելի
տէրունեան ծորակները Մարիամու տագնապած սրաբ
ծարաւին հոսելով, կամք որոշած ակնապիշ և անբած
սիրոյ բենեպել:

Իսկ Սէր Անուն Յիսուս իւր տարփաւոր սիրելին
սիրով բաւական անցնելով խոստացաւ նրա միշտ իւր
Աստուածային սիրոյ զիրկ պահել, սէր տալ, սիրել և
իրմէն միշտ անմեկին պահել, որուն համար խանդա-
ղատեալ երջանիկ կին վառեցաւ առնացի զինով կամ
սիրով Յիսուսի շապեց փութացաւ Աշակերտաց պատ-
մել և աւետել, ինչ որ տեսաւ և լսեց, և շատ իրան
հանդիպողաց աւետարանեց, որոց պատահեցաւ, սիրոյ
աշակերտաց սգաւոր Առաքելոց ի Թալիլիս հաւաքեց,
ուր Յիսուս կանենիկ նոցա ժամադիր եղաւ:

Ահա սորա համար է, երջանիկ կոյս, ըոյդ սիրոյ
գեղեցիկ և չքնաղ սիրոյ ստիպում իմ աղքատիկ բա-
գեղեցիս, որ կտագնապի քեզ սիրոյ քարտէզ յօ-
րինել, ըոյդ արդար և անմեղ հոգոյդ բանաձարակ լի-
նի սիրոյ գեղապարար սուրբ մարմանդին, բանալ քեզ
նոր պարտէզ Յիսուսին սիրոյ, ուր իւղաբեր սուրբ
միշտ իւղապարար սիրոյ և հաւատոյ լաղտե-
կանայք միշտ իւղապարար սիրոյ և հաւատոյ լաղտե-
կանայք միշտ իրենց սուրբ հոգիք պարարտացնել, և
սիրոյ զովարար Աղբիւրով զովել, Յիսուս ըոյդ անմահ
սէր, քեզ ծաղիկ անթառամ, ըոյդ քմաց հոտ անոյշ-
թէր, քեզ ծաղիկ անթառամ, քեզ միշտ մերձ յաւիտեան, քեզ
քուրի ով աննմահ, քեզ միշտ մերձ յաւիտեան, ակնի
պա, ա գոյն չքնաղ, քեզ իւր տես լի սիրով, քեզ

իւայծ սէր քաղցր հոգուոյդ, քոյդ ճարակ իւր մարմին,
քեզ բերկալի իւր Արևին, քոյդ կամաց կեր և արք,
Մարիամ թէ կոչես, նոր աղերս հաճելի, քեզ Յիսուս
գրկափար տայ նուէր մայրական, իւր ստինք շնորհա-
բուխ Յիսուսն է սիրական, Մագթաղի պէս թէ փու-
թաս գերեզման Գողգոթայ, քեզ դադար կենավայր,
տէրունի Գալիենյն, քեզ այլին Բեթլէնէմ, ուր սէրն
քեզ ժաման, ինչ կամիս անդ կառնուն, սէր և յոյս
քոյդ Յիսուս, սրտիդ տենչ նազելոյս, քեզ բաւ միայ-
նակ սուրբ նշան Յիսուսի, քեզ խաչ առ քոյդ քամակ,
բարձրացիր զափիկը, յաջակողմն, ուր Յիսուս քեզ ըն-
կեր, կաց միշտ անդ անվեհեր:

Հոգեոր եղբայր ձեր մանկավարժ
Մարտիրոս վարդապետ Սմեծեան

1877 ամի, 2 փետր.
ի Սանտինի

Շնորհունակ սարկաւագուհին իր վերջին օրե-
րը անց է կացըել նոյնպէս բազմաթիւ բարեգոր-
ծութիւնները շարունակելով։

Սակայն անգութ ճակատագիրը տնօրինում
է զցել անկողին և այդ է եղել պատճառը, որ
իր մայրապետութեան հերթից հրաժարւելով՝
տւել է ներկայ մայրապետ յարգելի կոյս Հոփի-
սիմէ Թայրեանին։


Կոյս Մանիա Լոռիս-Մելիքեանը վախճան-
ում է 1912 թ. յունարի 10-ին և թաղւում
Խօջիվանքում գտնուող Բեհրութեանների տոհմա-
կան դամբարանում, մայրապետների շիրիմնե-
րին կից։

Ըստ կուսանաց անապատի սովորութեան
ամեն մի կոյսի խնամակալութեան ներքոյ յան-
ձնուում է մի նորընծայ կոյս։ Ուստի հանգու-
ցեալ կոյս Մանիայի խնամակալութեան ներքոյ
գտնում էր սարկաւագուհի կոյս Եփէմիա Վար-
դանեանը և հանգուցեալը նրան է յանձնում իր
մահւանից յետոյ շարունակել իր փայփայած բա-
րեգործութիւնները՝ տալով նրան իր ամբողջ
կարողութիւնը։

Այժմ բարեկրօն սարկաւագուհի Եփէմիայի
խնամակալութեան ներքոյ գտնուում է կոյս Մա-
նիա Զիջեանը, որը պահւում է կուսանոցում
հանգուցեալ կոյս Լոռիս-Մելիքեանի հաշուով։

Վերջացնելով ներկայ գրութիւնս, կարող եմ աւելացնել, որ այսքան բարեմասնութիւններ ունեցող մի բարերարի և մի մաքրակենցաղ կոյսի անունը չէր կարելի դուրս շպրտել պատմութիւնից, ինչպիսին է Հայր Խորէնի կազմածը, որը կուսանոցի ապագայ պատմութեան նիւթը պէտք է դառնայ:

Առանց այն էլ այժմեան մեր հոգևորականութեան, կուսակրօնութեան և միանձնուհիների մէջ շատ քչերին է վիճակւում անուն վաստակելու ժողովրդի սէրը վայելել:



ՀՀ Ազգային գրադարան



NL0163074

4

9866 b 25 40924

